Առատ պարգեւօք էին սրտաբաց,
Բայց արդ իմ աչաց Լաթիլք արտասուաց,
Կ'առնեն իմ տխուր սուրբ յատակս թաց,
Ցամուկ արտամազգեաց։

5 Ո՞ւր են իմ զարդեր կարմիր ծիրանի,
Ո՞ւր թագք մարգարտեայ, զգեստք բեհեղեայ,
Որով օրհնութիւնք աղօթք զովանի,
Լինէին անհատ հանապազորդեայ,
Սիրով մշտակայ։

6 Ո՞ւր են խնկատուփ, բուրվառ աղօթից,
Ո՞ւր սուրբ ալելուք, դասք միաբանից,
Դոցա փոխարէն ջղջիկ գարշելի,
Արդ սուրբ պատէրիս վրայ լի են լի,
Ձեւով ահռելի։

7 Ո՞ւր են արօրք, ո՞ւր քաջ մշակներ,
Որք մշակէին բեղմնաւոր սերմեր,
Ո՞ւր արտօրայքս, ո՞ւր իմ ճոխ հունձեր,
Որոնք տային ինձ զեղեցիկ խուրձեր,
Ցանձախ պտղաբեր։

8 Ո՞ւր են անդէայս, պտղաւէտ այգիս.
Ո՞ւր են լուծք եզանց, ո՞ւր և նժոյգ ձիս,
Որք ծնանելով մի ուրախ կեանք յիս,
Աւիթ բերկրութեան ձօնէին սրտիս,
Ցալով զբաղիս։

9 Ո՞ւր են սառնորակ և ակնակիտ,
Գեղեցկայարմար աղբիւրս վճիտ,
Ո՞ւր շաղրուանս միշտ կարկաջասահ,
Երբ զիմ կեանս կարծէի անմահ.
Թշնամուց անահ։

10 Դու ասա կ'տեսնես սրբազան հարանց,